ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԵՐԳԵՅ ՀԱԿՈԲԻ ԷԼԱՐՅԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը.00.02 – «Տնտեսության, նրա առանձին ոլորտների տնտեսագիտության և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Միքայել Սերգեյի Մելքումյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Սարգիս Լևոնի Ղանթարջյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ Արտավազդ Սուրենի Թադևոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 15^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. նոյեմբերի 22-ին:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ա.Հ. Առաքելյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանի Հանրապետության տնտեսության մյուս ոլորտների զարգացմանն աճին նպաստող, արագ աճող հատվածներից է, ինչի վկայությունը ոլորտում 2010-2015 թթ. գրանցված 20.1% միջին տարեկան աճն է[1]: Միաժամանակ, 2000 թ. համեմատ (երբ ՀՀ կառավարությունը ՏՏ ոլորտը հայտարարեց որպես տնտեսության գերակա ոլորտներից մեկը) 2015 թ. ՏՀՏ ընկերությունների թիվն աճել է գրեթե 8.1 անգամ[2]: Տեղեկատվական ոլորտի զարգացման մեջ ներդրումների ծավալը, այդ թվում՝ 2009-2014 թթ. ՏՏ ոլորտում ՕՈՒՆ-երն աճել են 2.3 անգամ, իսկ ընդհանուր ներդրումները՝ 154.8 %-ով[3]: Այդուհանդերձ, հետհատույցը բարձրացել է ավելի փոքր չափով, ինչը վկայում է կատարվող ներդրումների կառավարման ցածր արդյունավետության մասին:

Հայաստանի ՏՏ ոլորտը հասունացել է մեծամասամբ մասնավոր հատվածի նախաձեռնությունների, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների շնորհիվ, ինչի արդյունքում ոլորտը հիմնականում կախված է ՏՏ արտադրանքի և ծառայությունների արտասպատվիրման (աութսորսինգի) հնարավորություններից և էականորեն չի նպաստում երկրի տնտեսական զարգացմանը:

Այժմ արդեն հասունացել է Հայաստանի ՏՏ ոլորտի զարգացման որակապես նոր փուլ: Այսօր Հայաստանում ՏՏ հատվածը ենթարկվում է փոխակերպման. հայկական ՏՏ ոլորտում դիտարկվում է աութսորսինգի մոդելից սեփական ապրանքի զարգացման և ձեռնարկատիրության մոդելին անցման աճող ալիքի միտում: Ոլորտի արդիական միտումները գնում են դեպի բարձր հավելյալ արժեքով ձեռնարկատիրական մոդել[4], որի հիմքում ՏՏ ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կառավարումն է՝ ձեռնարկությունների ներդրումային գրվչության բարձրացումը, կապիտալի շահութաբերության մաքսիմալացումը, շուկայական արժեքի աճը: Բոլոր նշված գործոնների ուղղակի կամ անուղղակի աղբյուր է ՏՏ ձեռնարկություններում ներդրումների կառավարման արդյունավետության բարձրացման խնդիրը:

Ուշադրության է արժանի նաև այն փաստը, որ միջազգային հայտնի ՏՏ ընկերությունները Հայաստանում դեռևս չեն

---

[1] ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2015: Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն: Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Եր., դեկտեմբեր 2015, էջ 3 (60 էջ)

[2] ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2015: Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն: Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Եր., դեկտեմբեր 2015, էջ 16:

[3] ՀՀ վճարային հաշվեկշիռը, 2009-2014թթ.

[4] The Global Information and Communications Technologies (ICT) Unit, The World Bank, June 2014, էջ 5

իրականացնում մեծածավալ գործունեություն: Կան բազմաթիվ օրինակներ, երբ այս կամ այն երկրի SS ոլորտը և նույնիսկ երկրի տնտեսական զարգացումը պայմանավորվել է այդ երկրներում այդպիսի ընկերությունների գործունեությամբ (օրինակ՝ Dell-ը՝ Իռլանդիայում[5], Nokia-ն՝ Ֆինլանդիայում[6], Microsoft-ը՝ Իսրայելում[7] և այլն): Այս առումով ևս արդիական է դառնում Հայաստանում SS ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացումը՝ որպես ոլորտի ներդրումային միջավայրի գրավչության աճի հիմք: Ընդ որում, ներդրումային քաղաքականության կատարելագործումը պետք է իրականացվի ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակներով:

Այլ երկրների հաջողված փորձերի հիման վրա Հայաստանը պետք է շեշտադրում անի ներդրումային մթնոլորտի բարելավման և զարգացման վրա, որն էլ SS ոլորտին անհրաժեշտ տեղական և օտարերկրյա աուդիտորի ներգրավման ապահովման նախապայմանն է:

Որպես SS ոլորտում օտարերկրյա աուդիտորի ներդրումների համար բարենպաստ երկիր՝ Հայաստանն արդեն ունի որոշ մրցակցային առավելություններ տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ, ինչպես օրինակ համեմատաբար էժան աշխատուժը, անգլերենի իմացությամբ մասնագետները և ոլորտի կայուն աճի միտումներն են[8]: Սակայն այսօր Հայաստանի տնտեսությունը դեռևս չի շահում SS ձեռնարկատիրության ոլորտի ներդրումային գրավչության, ներգրաված ներդրումներից արդյունք ստացման Հայաստանի SS ձեռնարկությունների ողջ ներուժը:

Հայաստանի SS ձեռնարկություններում ներդրումների ներգրավման, դրանց օգտագործման, կառավարման և, առհասարակ, ներդրումային քաղաքականության հիմնախնդիրներ համակողմանի լուսաբանված չեն:

SS ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել Հայաստանում SS ձեռնարկատիրության իրավանորմատիվային խնդիրները, ոլորտի թույլ և ուժեղ կողմերը, գնահատել փոխկապվածությունները մի կողմից տնտեսական զարգացման, մյուս կողմից՝ SS ոլորտուղղակի օտարերկրյա ներդրումների ներհոսքի, դրանք խթանող և խոչընդոտող գործոնների միջև, մատնանշել SS ձեռնարկություններ ներդրումների ներգրավման, ներդրումային քաղաքականության

---

[5] http://expert.ru/expert/2010/01/pohozhdeniya_keltskogo_tigra/
[6] http://www.c-culture.ru/read/article/41379
[7] http://www.ru-90.ru/node/1519
[8] ՏՀՏ ոլորտը Հայաստանում 2015: Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն: Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Եր., դեկտեմբեր 2015, էջ 12

կատարելագործման առավել նպատակահարմար ուղիները, ինչը, վերջին հաշվով, կբերի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արտադրության որակական և քանակական փոփոխությունների, արտադրողականության բարձրացման, ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործման և ի վերջո տնտեսական աճի:

Վերոնշյալը հնարավորություն է ընձեռել ձևակերպելու ատենախոսական աշխատանքի նպատակը և խնդիրները, պայմանավորել հետազոտության մեթոդաբանությունն ու աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսական հետազոտության նպատակը ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումների արդյունավետության հիմնախնդիրների բացահայտումն է և դրանց լուծման մեթոդաբանական գործիքակազմի մշակումը:

Հետազոտության նպատակը հիմք է հանդիսացել հետևյալ խնդիրները ձևակերպելու համար.

- ուսումնասիրել և ընդհանրացնել ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության մշակման և իրականացման տեսական կողմերը,
- գնահատել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների զարգացման վիճակն ու հեռանկարները,
- ուսումնասիրել ներդրումային քաղաքականության արդյունավետությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում,
- բացահայտել և հիմնավորել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումների արդյունավետության բարձրացման նախադրյալները,
- մշակել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումների արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգ,
- մշակել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումների արդյունավետության բարձրացման մեթոդական գործիքակազմ՝ հայեցակարգային մոտեցումներով հանդերձ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններն են: Հետազոտության առարկան տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումների

արդյունավետության բարձրացման մեթոդներն են:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների դրույթները. կիրառվել են գիտական ճանաչողության վերացարկման, համակարգային, դինամիկ վերլուծությունների, համեմատական, պանելային, գործոնային վերլուծությունների տնտեսամաթեմատիկական մեթոդները: Հետազոտության համար որպես տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել հայրենական և օտարերկրյա հետազոտողների աշխատությունները, մասնավորապես՝ միկրոէկոնոմիկայի, ձեռնարկատիրական գործունեության կառավարման և պետական կարգավորման տեսության և մեթոդաբանական ոլորտի, կառավարչական որոշումների ընդունման և իրականացման տեսությունների, էկոնոմետրիկ վերլուծությունների իրականացման կիրառական մշակումները, զարգացման ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը:

Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրերը, ՀՀ ֆինանսների, Էկոնոմիկայի նախարարությունների, առևտրով զբաղվող փոքր ու միջին սուբյեկտների և գյուղատնտեսական կազմակերպությունների պաշտոնական տվյալները, նյութերը, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (Եվրոստատ, Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն և այլն) զեկույցներն ու վերլուծական նյութերը**:**

Աշխատանքի գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն ամփոփված է հետևյալ արդյունքներում՝

- Առաջարկվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկություններում ռազմավարական նպատակների ձևակերպման և դրանց իրագործելու գործիքակազմի կիրառման հեղինակային մոտեցում:
- Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկվել են ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը և պետական աջակցության հայեցակարգի պարզեցմանն ուղղված իրավական կարգավորման նոր մոտեցումներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններ:

- ՀՀ SS ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ առաջարկվել է SS ձեռնարկություններում ներդրումային ծրագրերի կատարելագործման և ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման կառուցակարգ:

Աշխատանքի գիտագործնական նշանակությունը և արդյունքների ներդրումը: Հետազոտության ընթացքում ստացված արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել գործարար ոլորտի, մասնավորապես SS ձեռնարկատիրության զարգացման ռազմավարությունների նախագծմամբ զբաղվող պետական մարմինների կողմից: Հետազոտության ընթացքում ստացված արդյունքները և եզրահանգումները կարող են կիրառվել հայկական SS ոլորտի գրավչությունն ուսումնասիրող մասնագետների համար, իսկ աշխատանքում արված հիմնական դրույթները կարող են կիրառություն գտնել ընդհանուր տնտեսագիտական և քննարկվող ոլորտին առնչվող հատուկ առարկաների շրջանակում: Վերլուծության համար օգտագործված վիճակագրական բազան կարող է օգտագործվել Հայաստանի Հանրապետության և ցածր միջին եկամտաբերությամբ զարգացող այլ երկրների հետազոտությամբ զբաղվող գիտնականների կողմից:

Հրապարակումներ: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները ներկայացվել և քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» խորագրով 25-րդ գիտաժողովում:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման» ամբիոնի նիստում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի 7 գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն շարադրված է համակարգչային 152 էջի վրա, պարունակում է 11 աղյուսակ, 10 գծապատկեր և 13 հավելված:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են տվյալ թեմայի շուրջ առկա խնդիրները, հետազոտության նպատակները, հետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, աշխատանքի հիմնական գիտական արդյունքներն ու

նորույթը, հետազոտության արդյունքների կիրառման օրինակները, հիմնավորվում է գործնական նշանակությունը, նկարագրվում է փորձարկումը, հրապարակումները և կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ ՏՏ ոլորտի ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության առանձնահատկությունները» գլխում հետազոտվել են Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների զարգացման օրինաչափությունները, բացահայտվել են ներդրումների ներգրավման խնդիրները, ընդգծվել են ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկություններում ներդրումների ներգրվման առանձնահատկությունները:

Հաշվի առնելով Հայաստանի ներդրումային և արտահանման ռազմավարության մեջ բարձր հավելյալ արժեք ապահովող սեգմենտում և առևտրային ծառայություններում արդյունավետության բարձրացմանն ուղղված ներդրումներին հատկացվող մեծ դերը, դիտարկվել են տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալները ըստ գործունեության տեսակների[9] և բացահայտվել են տնտեսության իրական հատվածում կատարվող ընդհանուր ներդրումների ծավալում ուղղակի օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը, տնտեսության իրական հատված ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների ընդհանուր ծավալում ՏՏ ձեռնարկատիրության ոլորտ ուղղված ՕՈԻՆ մասնաբաժինը և ՏՏ ներդրումների մասնաբաժինը են տնտեսության իրական հատվածում կատարվող ընդհանուր ներդրումների ծավալում, դիտարկվել են այդ հարաբերակցությունների փոփոխման օրինաչափությունները և կատարվել են համապատասխան եզրակացություններ:

ՏՀՏ ոլորտի ձեռնարկատիրության զարգացման օրնիաչափությունների ուսումնասիրությունը թույլ է տվել բացահայտել ՀՀ-ի հիմնական մրցակցային առավելություններն ու թերությունները.ինչպես գիտենք հատվածի աճի առաջատար գործոններից մեկը դրա գրավչությունն է օտարերկրյա կազմակերպությունների համար՝ Հայաստանում մասնաճյուղեր բացելու տեսանկյունից: Գլխավոր մրցակցային գործոնը Հայաստանում համեմատաբար էժան և մրցունակ մարդկային ռեսուրսներն են: Հիմա Հայաստանը կարծես թե գտնվում է այս մրցակցային առավելությունը կորցնելու սահմանին:

---

[9] www.armstat.am, «Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», 2009-2014թթ., «Արտաքին հատված», «Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալն ըստգործունեության տեսակների»

Հայաստանում ՏՏ ընկերությունների աճող քանակի շնորհիվ ՏՏ մասնագետների նկատմամբ պահանջարկը շարունակելու է աճել: Ըստ պահպանողական գնահատականների, եթե շուկան ու արտադրողականությունը շարունակի աճել համապատասխանաբար 18% և 1% աճի տեմպով, լրացուցիչ ՏՏ մասնագետների ներուժի կլանումը կաճի տարեկան 17% աճի տեմպով՝ հասնելով 2017 թվականին շուրջ 15000-ի[10]:

Այսօր Հայաստանում ՏՏ հատվածը ենթարկվում է փոխակերպման. դիտարկվում է աութսորսինգի մոդելից սեփական ապրանքի զարգացման և ձեռնարկատիրության մոդելին անցման աճող ալիքի միտում: Աճի այս մոդելը պահանջում է գիտելիքի ավելի բարձր մակարդակ, նոր հմտություններ և ձեռնարկատիրական գիտելիք և հիմնված է ծախսային մրցունակության վրա:

Ըստ միջազգային գնահատականների ՏՏ ձեռնարկատիրության առջև ծառացող հիմնական սահմանափակում կանխատեսվում է ՏՏ աշխատաշուկայի չափը: Ոլորտի մարդկային ռեսուրսների կլանման ներուժի գնահատման նպատակով ոլորտի աճի ներուժը կանխատեսվում է պատմական հիմքի միջոցով: Ըստ հիմնական աճի սցենարի չափավոր միջին արտադրողականության մակարդակը 4% է, իսկ համախառն արդյունքի միջին աճի տեմպը 22% է:

Մասնագետների որակը և հմտությունների մակարդակը առաջիկայում դառնալու են վճռական: Արտադրողականության վրա աճող ճնշումը նույնպես թելադրում է ոլորտի ավելի բարձր հավելյալ արժեքով հատվածների գրավման անհրաժեշտությունը: Սա պահանջում է նոր հմտությունների հավաքածու:

ՀՀ ՏՏ ձեռնարկություններ ներդրումների ներգրավման և առհասարակ ՏՏ ձեռնարկատիրության զարգացման հարցում մարդկային կապիտալի գործոնի վճռական նշանակության մասին են վկայում նաև ատենախոսության շրջանակներում իրականացված էմպիրիք հետազոտության արդյունքները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկատիրական մոդելի առջև ծառացող մյուս կարևորագույն խնդիրներն են ՏՏ ոլորտի ներդրումային միջավայրի գրավչության աճի և ներդրումների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտումը: Ընդորում, վերոնշյալ երկու խնդիրների լուծման հիմքում էլ ընկած է ՏՏ ձեռնարկության ներդրումային քաղաքականության արդյունավետության գործոնը, ինչը պայմանավորել է ատենախոսության մեջ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկություններում ներդրումների և ներդրումային

[10] The Global Information and Communications Technologies (ICT) Unit, The World Bank,"ICT Skills Assesment in Armenia", June 2014, էջ 5

քաղաքականության առանձնահատկությունների վերլուծությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտման նկատառումով դիտարկվել են նաև դրա վրա ազդող արտաքին ու ներքին գործոնները, ուսումնասիրվել են ՏՏ ձեռնարկատիրության ոլորտում ներդրումային քաղաքականության արդյունավետության վրա ազդող արտաքին և ներքին միջավայրի պայմանները ՀՀ-ում՝ ընդգծվել են ներդրումային գրավչության աճին նպաստող պայմանները և բացահայտվել են գրավչության արտենցյալ աճին խոչընդոտող խնդիրները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ՏՏ ոլորտի ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության գնահատման առանձնահատկությունները» գլխում իրականացվել է ՏՏ ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության գնահատում (ՀՀ նյութերով) և ՏՏ ձեռնարկությունների ներդրումային գրավչության գնահատում ֆինանսական կառուցակարգի գործառնական մոդելով:

Նախ ուսումնասիրվել է ներդրումների և ներդրումային քաղաքականության գնահատման մեթոդաբանությունը և ընդգծվել են ՀՀ-ում ՏՏ ձեռնարկությունների կողմից ներդրումային քաղաքականության արդյունավետության գնահատման մոտեցումների յուրահատկությունները. բանն այն է, որ ներդրումային գործունեության արդյունավետության գնահատման կիրառվող ցուցանիշները, իրենց կարևոր կիրառական նշանակությամբ հանդերձ, ունեն նաև էական թերություն՝ ի դեմս մասնակի բնույթի: Ներդրումային գործունեություն իրականացնող ձեռնարկությունների, ինչպես նաև ներդրումների ներգրավման նպատակ առաջադրած ձեռնարկությունների տնտեսագետները բախվում են ղեկավարությանը ներդրումների կառավարման արդյունավետությանն առնչվող լիարժեք ու ամբողջական տեղեկատվություն մատուցելու խնդրին: Ներդրողին, բացի նշված ցուցանիշների հաշվարկից, անհրաժեշտ է ռիսկի գնահատում, նրան անհրաժեշտ են հետևյալ հարցերի պատասխանները. բիզնեսի զարգացման ներուժ, աճի ներուժ, իիրացման հարցում ձեռնարկության մենեջմենթի հնարավորությունները, ձեռնարկության թափանցիկության աստիճանը, լիարժեք վերահսկողության և գլխավոր կառավարչական որոշումների վրա ազդելու հնարավորությունները:

Ձեռնարկության ներդրումային քաղաքականությունը ձեռնարկության ֆինանսական կառուցվածքի մի մասն է և դրա արդյունավետությունը կախված է ֆինանսական կառուցվածքի լիարժեք աշխատանքից: Վերջինս ենթադրում է ռազմավարական ֆինանսական պլանավորումը, կապիտալի կառուցվածքի և արժեքի օպտիմալացումը, ֆինանսական գործունեության պլանավորումն ու ֆինանսական վերլուծությունը, զգայունության վերլուծությունը և սցենարային վերլուծությունը, ներդրումային վերլուծությունն ու պլանավորումը: Այլ կերպ ասած, ձեռնարկության ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվել է ընդլայնել վերլուծության սահմանները՝ լրացնել ներդրումների վերլուծությունը ձեռնարկության ֆինանսական վիճակի և ձեռնարկության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների գնահատմամբ և ձեռնարկության մենեջենթի համապատասխան օպերատիվ արդիական արձագանքով, ինչը ատենախոսության մեջ առաջարկվել և հիմնավորվել է SS ձեռնարկությունների գործնական օրինակներով:

Օգտագործելով վերլուծության առաջարկված մոտեցումների և գնահատման մեթոդների ամբողջությունը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի երեք հայկական ձեռնարկությունների օրինակով իրականացվել է դրանց ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման սցենարային վերլուծություն և բացահայտվել են հայկական SS ձեռնարկությունների համար ներդրումային քաղաքականության առավելագույն հնարավոր արդյունավետ մակարդակի գրավման ուղիները՝ հաշվի առնելով դիտարկված ձեռնարկությունների տեսակների ֆինանսական կառուցվածքի առանձնահատկությունները[11]:

Ըստ էության, մշակվել է SS ոլորտի ձեռնարկությունների ֆինանսական մեխանիզմի գործառնության մոդել, որը թույլ է տալիս որպես ներդրումային գրավչության բարձրացման չափանիշ սահմանել սեփական կապիտալի շահութաբերության աճը և ապահովել այն ֆինանսական մեխանիզմի հետևյալ տարրերի միջոցով՝ ակտիվների շրջանառելիություն, կապիտալի կառուցվածք և արժեք, օպերացոն վերլուծություն և ֆինանսական գործունեության պլանավորում, ֆինանսական լծակ:

Ատենախոսության երրորդ՝ «Ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ SS ոլորտում» գլխում ներկայացվել են SS ձեռնարկությունների ներդրումային գրավչության աճի

[11] SS ձեռնարկությունների տվյալները տրամադրվել են աուդիտորական ընկերության կողմից՝ պահպանելով գաղտնիությունը

առաջարկվող ռազմավարությունը և ՀՀ ՏՏ ձեռնարկություններում ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման հիմնուղիները:

Հաշվի առնելով ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության գործոնի կարևորությունը, մշակվել է համապատասխան գործառնական մոդել՝ ձեռնարկության ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման, դրա ներդրումային գրավչության աճի ապահովման գործիքակազմի կիրառման հեղինակային մոտեցում:

Որպես ՏՏ ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման մոտեցում՝ ներդրումային գրավչության աճ ապահովող առաջարկված գործառնական մոդելի կիրառությանը ձեռնամուխ եղած ձեռնարկությունները մոդելի շրջանակներում պահանջվող ցուցանիշների համակարգը, հաշվարկներն ու վերլուծությունները համակարգված կերպով, կազմակերպելու դեպքում, կհանգեն լրացուցիչ դրական էֆեկտների. ցուցանիշների նպատակային արժեքների սահմանման, ռազմավարական նպատակների իրագործման, առանձին գործընթացների վերահսկման համար պատասխանատու ստորաբաժանումների կամ աշխատակիցների կազմի և կառավարման այլ գործառույթներին առնչվող մանրամասների պաշտոնական ձևակերպումները կարող են հիմք ծառայել ձեռնարկության ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման հայեցակարգի մշակման համար: Վերջինիս առկայությունը մի կողմից կարող է ծառայել ձեռնարկության մենեջմենթի որակի բարելավմանը, մյուս կողմից, լինելով վիճակագրական բավական հարուստ հարթակ, կարող է հիմք հանդիսանալ ՀՀ ՏՏ ձեռնարկությունների ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման հիմնուղիների մշակման համար, ինչպիսին օրինակ ՏՏ ձեռնարկություններին պետական երաշխավորությունների համակարգն է:

ՀՀ ՏՏ ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ մշակվել է ՏՏ ձեռնարկություններում ներդրումային ծրագրերի կատարելագործման և ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման հեղինակային մոտեցում, որը և՛ ձեռնարկության արդյունավետ կառավարման գործիք է, և՛ ՏՏ ձեռնարկություններին պետական երաշխավորությունների տրամադրման կառուցակարգի տարր:

Հայաստանում ՏՏ ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտումը, ներդրումների ներգրավման, ներդրումային քաղաքականության կատարելագործման առավել նպատակահարմար

ուղիների մատնանշումը կարող է հիմք ծառայել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում արտադրության որակական և քանակական փոփոխությունների, ՏՏ ձեռնարկությունների ներդրումային գրավչության աճի, ՏՏ ՓՄՁ-ներում արտադրողականության բարձրացման, ռեսուրսների առավել օպտիմալ օգտագործման և անուղղակի կերպով հանգեցնել տնտեսական աճի:

ՏՏ ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիների հետազոտությունում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում ձևավորվել է եզրակացությունների որոշակի համախումբ, որը ներկայացվել է ատենախոսության **«Եզրակացություններ»** բաժնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՏՏ ոլորտի հայկական ձեռնարկությունների ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների ուսումնասիրությունը հիմք է ծառայել տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկություններում ներդրումների որոշման տարբերակիչ գործոններից առանձնացնելու հետևյալները՝
   - ոչ նյութական ակտիվների առկայությունը,
   - անավարտ արտադրության բացակայությունը,
   - նյութական պահուստների բացակայությունը գույքի կառուցվածքում,
   - ավելի կարճ գործառնական ցիկլը
   - կարճ ֆինանսական ցիկլը,
   - ակտիվների շրջանառելիության, շահութաբերության և կայունության ավելի բարձր մակարդակը:
2. Ներդրումային քաղաքականության մշակման տեսամեթոդաբանական դրույթների ընդհանրացումը հիմք է ծառայել սահմանելու ՏՏ ձեռնարկության ներդրումային քաղաքականությունը որպես ձեռնարկության ֆինանսական համակարգի մի մաս և ընդգծելու, որ ձեռնարկության ֆինանսական համակարգի վրա զգալի ազդեցություն են ունենում արտաքին մակրո և միկրո միջավայրի գործոնները, որոնց ազդեցությամբ և այդ ազդեցությանն արձագանքելու ձեռնարկության մեկնեջմենթի ունակությամբ էլ պայմանավորված է ինչպես ներդրումային քաղաքականության, այնպես էլ առհասարակ ձեռնարկության տնտեսական գործունեության արդյունավետությունը:
3. Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման ներքին լծակներ են.

- ձեռնարկության ֆինանսական կառուցվածքի արդյունավետաշխատանքը, որը ենթադրում է.
  - ✓ ձեռնարկության ներդրումային գրավչության աճ,
  - ✓ ձեռնարկության շուկայական արժեքի աճ,
  - ✓ ձեռնարկության ֆինանսական կայունության բարձր մակարդակ,
  - ✓ սեփական կապիտալի մաքսիմալ շահութաբերություն,
- ձեռնարկության գործունեության արդյունավետ վերլուծության հիման վրա կառավարչական ճիշտ որոշումների կայացումը:

4. SS ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման վրա ազդող արտաքին գործոններից են.
   - ռեսուրսային բազայի էժանացումը,
   - վարկավորման պայմանների կարգավորումը,
   - լիզինգի արտոնյալ պայմանների տրամադրումը,
   - ապահովագրության պայմանների կարգավորումը,
   - հարկային պայմանների կարգավորումը կանոնադրական մակարդակով,
   - ոլորտի կարգավորման նորմատիվաիրավական միջավայրի կատարելաճ գործումը,
   - ներդրումների խթանման մեխանիզմների մշակումը
   - պետական աջակցության այլ համակարգերն ու միջոցառումները:
5. Ուսումնասիրելով հայկական SS ձեռնարկություններում ներդրումային գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը՝ կարող ենք փաստել, որ որպես արդյունավետության գնահատական ընդունվող ցուցանիշները (NPV, IRR, PI, PP)՝ իրենց կարևոր կիրառական նշանակությամբ հանդերձ, ներդրումային քաղաքականության արդյունավետությունը չեն կարողանում բնութագրել լիարժեք և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու միջոցով՝ պայմանավորված այդ ցուցանիշների մասնակի բնույթով: Ուստի արդիական է դառնում վերը նշված խնդրի լուծումը՝ SS ձեռնարկության տնտեսական գործունեության և ֆինանսական վիճակի վերաբերյալ ցուցանիշների ողջ համակարգի մանրակրկիտ վերլուծության և դրա հիման վրա SS ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության աճ ապահովող կառավարման նոր սխեմայի մշակման ճանապարհով:
6. Հայաստանում կիրառվող SS ձեռնարկություններում ներդրումային քաղաքականության արդյունավետության վրա ազդող արտաքին միջավայրի պայմանների ուսումնասիրությունը (օրենքով սահմանված կարգով հավաստագրված կազմակերպությունների համար

շահութահարկի 0% դրույքաչափի կիրառում, եկամտային հարկի 10% դրույքաչափի կիրառում՝ անկախամասական հարկվող եկամտի չափից (անհատ ձեռնարկատերերի համար՝ եկամտային հարկի 0% դրույքաչափի կիրառում), հիմնադիր կապիտալում ներդրումների կատարման համար տուրքերի բացակայություն, հաշվետու և նախորդող տարիներին հարկատուն, այդ թվում նաև օտարերկրյա ներդրողը գործունեությունից վնասներ ունենալու դեպքում, փոխանցում է ստանում վնասների ստացման տարվան հաջորդող 5 տարիների ընթացքում, արտահանման տուրքերի չկիրառման համակարգը, արտահանվող արտադրանքի և ծառայությունների արժեքի մեջ ներառված ԱԱՀ-ի վերադարձման համակարգը) թույլ է տալիս փաստել ՏՏ ձեռնարկատիրության ոլորտի ներդրումային գրավչության խթանման միասնական համակարգի բացակայությունը և իրավական կարգավորման միջավայրի այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են.

- ներդրող-պետություն հնարավոր վեճերի լուծման շրջանակներում օտարերկրյա ներդրողը իրավունք չունի դիմելու միջազգային արբիտրաժ,
- ազատ տնտեսական գոտիների գործողության ժամկետի փոփոխությունը, մասնավորապես՝ երկարաձգումը՝ ԱՏԳ-ի ստեղծման պահին դրա նպատակին հասնելու համար, իրավական տեսանկյունից ամրագրված չէ,
- ԵՏՄ երկրների տարածքերում ԱՏԳ-ների ստեղծման և գործունեության կարգերին ու ժամկետներին, գործունեության դադարեցման, կազմալուծման, լուծարման, ինչպես նաև ԱՏԳ շահագործող ռեզիդենտների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման պահանջներն ապահովելու նպատակով չեն գործում համապատասխան իրավական կարգավորումներ,
- ԱՏԳ տարածքում գործունեություն իրականացնելու համար հարկային տեսանկյունից առկա չեն հավասար պայմաններ, մասնավորապես՝ անհատ ձեռնարկատեր ԱՏԳ շահագործողները ազատված չեն եկամտային հարկից՝ այդ գործունեության իրականացման մասով, ի տարբերություն իրավաբանական անձանց, որոնք ԱՏԳ-ում գործունեություն իրականացնելու համար շահութահարկ չեն վճարում,
- ՏՏ ոլորտի ձեռնարկությունների՝ պետական աջակցություն ստանալու հնարավորությունները սահմանափակված են ընկերությունների՝ մինչև 30 վարձու աշխատող ունենալու հանգամանքով:

Վերը նշված խնդիրների լուծման կարևորությունը նկատի առնելով՝ հետազոտության ընթացքում մշակվել և ներկայացվել են համապատասխան առաջարկություններ:

Ձեռնարկության մակարդակով որպես տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնուղի առաջարկվում է ՏՏ ձեռնարկությունների ներդրումային գրավչության բարձրացման ռազմավարական մոդել, որն ընդգրկում է.

- ռազմավարական նպատակների սահմանումը.
  - Դյուպոնի մոդել
  - Կայունաճի մոդել
  - Վաճառքի ծավալից տոկոս (%)
- ռազմավարության ընտրությունը
  - ֆինանսական հոսքերի արդյունավետության վերլուծություն
- ֆինանսական քաղաքականության ընտրությունը
  - Ծախսերի, իրացման ծավալի և շահույթի փոխկապվածության վերլուծություն
  - անվնասաբերության վերլուծություն
- ռազմավարական ֆինանսական այլընտրանքների գնահատումն ու ընտրությունը,
  - զգայունության վերլուծություն
  - սցենարային վերլուծություն
- ռազմավարական ֆինանսական զարգացման ծրագրի մշակումը
  - փորձագիտական վերլուծություն
- ծրագրի գնահատումը
- ընթացիկ կառավարումը:

Որպես ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղի առաջարկված ռազմավարական մոդելի կիրառման արժևորությունը պայմանավորված է ներդրումների ներգրավման այլընտրանքային տարբերակների առկայության դեպքում ներդրումային գրավչության բարձրացման տեսանկյունից տնտեսապես ամենաարդյունավետ սցենարի ընտրության հնարավորության մեջ:

Մակրո մակարդակով ՏՏ ձեռնարկությունների ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնուղիներից է, ինչպես նշվեց, պետական երաշխավորությունների համակարգի առկայությունը, ուստի առաջարկվում է.

- ՏՏ ձեռնարկությունների կողմից ՏՏ ձեռնարկությունների ներդրումային ծրագրերի կատարելագործման և ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման հայեցակարգի մշակում
- ՏՏ ՓՄՁ-ներում ներդրումների պետական երաշխավորությունների տրամադրման համապատասխան գործադիր մարմնին ներկայացված տվյալների

վերլուծության հիման վրա դիմորդ ընկերությունների ցանկից առաջատարների ընտրություն՝ դրանց պետական երաշխավորությունների տրամադրման նպատակով:

- առաջատարների ընտրության թափանցիկության նպատակով առաջարկվում է կառուցակարգով նախատեսված և ներկայացված տվյալների բացության ապահովում (օրինակ էլեկտրոնային կառավարության կամ պաշտոնական այլ կայքում տվյալների անընդհատ արտացոլման և թարմացման միջոցով):

ՏՏ ձեռնարկություններում ներդրումների պետական երաշխավորությունների մեխանիզմի կիրառությունից տնտեսությունը կշահի թե՛ համապատասխան ոլորտում ստվերային բաժնեմասի նվազման, թե՛ ՀՀ ՏՏ ձեռնարկատիրության ոլորտի ներդրումային գրավչության բարձրացման առումներով:

ՏՏ ձեռնարկությունների ներդրումային գործունեության պայմանների բարելավման նպատակով իրավական դաշտի հետազոտության ընթացքում բացահայտված իրավական խոչընդոտների վերացման նպատակով առաջարկվում է կատարել փոփոխություններ համապատասխան իրավական ակտերում.

- «Օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» օրենքում ավելացնել դրույթ, որով օտարերկրյա ներդրողին իրավունք կտրվի վեճերի ծագման դեպքում դիմել միջազգային արբիտրաժ,
- Կառավարության համապատասխան որոշման մեջ կատարել փոփոխություն՝ ավելացնելով կետ, որը թույլ կտա երկարաձգել ազատ տնտեսական գոտու գործունեության ժամկետը,
- ընդունել համապատասխան իրավական նորմատիվային ակտ, որով կկարգավորվեն ԱՏԳ-ների ստեղծման և գործունեության կարգերին ու ժամկետներին, գործունեության դադարեցման, կազմալուծման, լուծարման, ինչպես նաև ԱՏԳ շահագործող ռեզիդենտների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման պահանջները,
- «Եկամտային հարկի մասին» օրենքում ավելացնել դրույթ, որով ԱՏԳ շահագործող համարվող անհատ ձեռնարկատերերը գործունեության այդ մասով կազատվեն եկամտային հարկից,
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում ուժը կորցրած ճանաչել այն դրույթը, որով սահմանափակվում է հավաստագիր ստանալու համար ձեռնարկությունների վարձու աշխատողների թվաքանակը:

Ներդրումների խթանման համակարգի մշակումը, միասնական քաղաքականությունը, ինչպես նաև իրավական շրջանակի սահմանումն ու հաջողությամբ իրականացումը բավական բարդ և երկարաժամկետ գործընթաց է, հատկապես այն

երկրներում, որոնց տնտեսությունը կենտրոնացված պլանավորմամբ համակարգից անցում է կատարել դեպի շուկայական տնտեսության համակարգ, սակայն վերոնշյալ միջոցառումների իրականացումը, ՏՏ ձեռնարկություններում ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված առաջարկված գործառնական ռազմավարական մոդելի կիրառմանը զուգընթաց, Հայաստանում ՏՏ ոլորտի ձեռնարկությունների համար ներդրումային միջավայրի կայուն զարգացման ապահովման հարցում հաստատուն և արդյունավետ քայլեր կլինեն:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվել են հեղինակի գիտական հրապարակումներում.

1. Ս. Էլարյան, Տեղեկատվական տեխնոլոգիաների կազմակերպությունների կողմից օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման միջազգային փորձը, Ֆինանսներ և էկոնոմիկա N 11-12 (183-184), Երևան, 2015, էջ 64-66:
2. Ս. Էլարյան, ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկությունների գործունեության համառոտ վերլուծություն, Այլընտրանք N 4, Երևան, 2015, էջ 23-33:
3. Ս. Էլարյան, Օտարկերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման մեխանիզմների կատարելագործման ուղիները ՀՀ-ում, Գիտելիք, Նորաստեղծություն և զարգացում ՀՊՏՀ 25-րդ գիտաժողով, էջ 417-421:
4. Ս.Էլարյան, ՀՀ ՏՏ ձեռնարկություններում ներդրումների արդյունավետության բարձրացման ուղիները, Այլընտրանք N 1, Երևան, 2016, էջ 94-99:
5. Ս. Էլարյան, Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքի ծավալի մաքսիմալացումը որպես ՏՏ ձեռնարկություններում ներդրումների արդյունավետության բարձրացման եղանակ, Ֆինանսներ և էկոնոմիկա, N 3-4 (187-188), Երևան, 2016, էջ 89-91:
6. Ս.Էլարյան, ՀՀ ՏՏ ձեռնարկություններում ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման հիմնուղիները, Այլընտրանք N 3, Երևան 2016, էջ 245-252:
7. տ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Մելքումյան, Ս. Էլարյան, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ մարզերում, Ֆինանսներ և էկոնոմիկա N 7-8 (179-180), Երևան, 2015, էջ 89-92:

ЭЛАРЯН СЕРГЕЙ АКОПОВИЧ
ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ ПРЕДПРИЯТИЙ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ (ПО МАТЕРИАЛАМИ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – "Экономика, управление хозяйством и его сферами".

Защита диссертации состоится 23-ого декабря 2016 г. в 15:00 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

В странах с низкой средней доходностью (в том числе в Армении), которые характеризуются крайней ограниченностью собственных источников финансирования, уникальным рычагом развития предприятий информационных технологий является привлечение прямых иностранных инвестиций, что делает актуальной задачу повышения эффективности инвестиционной политики в предприятиях ИТ.

Неправильно разработанная или неправильно реализуемая инвестиционная политика предприятий информационных технологий чревата такими опасными последствиями для экономики, как уменьшение инвестиционной привлекательности отрасли, снижение объемов привлеченных инвестиций и низкий уровень эффективности. Несмотря на богатый запас исследований инвестиционной деятельности, очень малая их доля была посвящена таким путям поднятия эффективности инвестиционной политики, которые в сочетании с теоретическими и практическими принципами реализации инвестиционной деятельности, давали бы возможность достижения повышения уровня инвестиционной привлекательности предприятий информационных технологий на основе конкурентных преимуществ в управлении предприятий.

Вышеперечисленные задачи подчеркивают важность изучаемого предмета, потребность его исследования и актуальность темы.

Объектом исследования является инвестиционная политика предприятий информационных технологий Армении а предметом – задачи повышения эффективности инвестиционной политики и пути решения этих задач.

Основная цель исследования – изложение наиболее практичных путей повышения эффективности инвестиционной политики в предприятиях ИТ Армении. И для достижения этой цели были поставлены и решены такие задачи, как обзор теоретических и методических основ оценки эффективности инвестиционной политики предприятия, анализ особенностей выявление конкурентных преимуществ, сильных и слабых сторон предприятий информационных технологий, изучение основных тенденций отрасли информационных технологий в Армении и выявление стратегический задачь привлечения инвестиций в эту индустрию, изучение правовых и нормативных характеристик ИТ бизнеса, идентифицирование существующих барьеров и

предложение способов их преодоления, а так же путей совершенствования инвестиционной политики предприятий информационных технологий в Армении.

Теоретической и методологической основой исследований послужили произведения отечественных и зарубежных исследователей, стратегические планы развития экономики и в частности ИТ сектора Армении, а также законы и нормативные акты, регулирующие сектор.

Научная новизна диссертации обусловлена рядом теоретических, методологических и практических результатов, полученных в ходе исследования. В том числе был разработан авторный подход обработки стратегических целей и использования инструментария для их реализации в предприятиях ИТ. Кроме того, исходя из необходимости совершенствования механизмов привлечения прямых иностранных инвестиций в РА, были разработаны новые подходы правового регулирования повышения эффективности инвестиционной политики и упрощения концепции государственной поддержки, в том числе законодательные изменения. С учетом специфики сектора информационных технологий в Армении был разработан механизм совершенствования инвестиционных програм и повышения эффективности инвестиционной политики в предприятиях информационных технологий.

Методические положения и выводы исследования могут быть использованы соответствующими органами исполнительной власти, которым делегированы функции по регулированию деятельности предприятий информационных технологий, руководителями и финансовыми менеджерами этих предприятий, органами законодательной власти различных уровней при составлении, рассмотрении и утверждении бюджетов развития отрасли информационных технологий.

ELARYAN SERGEY HAKOB

WAYS OF IMPROVEMENT OF INVESTMENT POLICY EFFECTIVENESS IN IT COMPANIES (BASED ON MATERIALS OF RA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Science in the specialities 08.00.02 – "Economics, Management of the Economy and its Spheres".

The defence of the thesis will take place at 15:00 on December 23, 2016 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Commision of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Adress: 52 Abovyan Street, Yerevan, 0009.

ABSTRACT

In lower middle income countries, such as Armenia, which is characterised by extreme limits of own sources of financing, attraction of foeign direct investments is a unique leverage of development of information technologies companies, which highlights the problem of icreasing investment policy effectiveness in IT companies.

Wrong designed or wrong implemented investment policy of IT companies is fraught with dangerous effects for economy, such as decreasing of investment attraction of the sphere, declining capacity of attracted investments and low level of effectiveness.

The objectives, mentioned above, emphasize the importance of the subject under study, the need for its research and relevance of the topic.

Despite the rich supply of research in investments and investment policy, a very small proportion was devoted to such ways of raising investment policy effectiveness, which, in conjunction with the theoretical and practical principles of the investment activity, would give the opportunity to achieve increasing levels of investment attractiveness of enterprises of information technology on the basis of competitive advantages in the management of enterprises.

The object of the research is the investment policy of Information Technology Enterprises of Armenia and the subject is the problem of increasing the efficiency of the investment policy and the ways of solving this problem.

The main purpose of the study is the presentation of the most practical ways to improve the efficiency of the investment policy in IT enterprises in Armenia. And to achieve this goal some tasks have been set and solved such as a review of theoretical and methodological framework for assessing the effectiveness of the investment policy of the company, analysis of the characteristics identifying competitive advantages, strengths and weaknesses of the IT enterprises, study of the basic trends of IT sector in Armenia and the identification of the strategic objectives attracting investment into this industry, the study of the legal and regulatory characteristics of the IT business, including the identification of existing barriers and suggestion of ways to overcome them, as well as ways to improve the investment policy of the enterprises of information technologies in Armenia.

The works of armenian and foreign researchers, strategic plans of economic development and in particular of IT sector in Armenia, as well as laws and regulations governing the sector served as a theoretical and methodological background for the research.

The scientific novelty of the thesis was provided due to a number of theoretical, methodological and practical results obtained during the study, Including the author developed approach of processing the strategic objectives and the use of tools for implementation of that objectives in IT enterprises. In addition, relying on the necessity to improve mechanisms for attracting foreign direct investments, new regulatory approaches were developed (including legislative changes) to increase the investment policy effectiveness and simplicity the state support concept. Considering the specifics of the information technology sector in Armenia a mechanism of improving the investment program and increasing the efficiency of the investment policy in the enterprises of information technology was also developed.

Methodical positions and conclusions of the study can be used by the relevant executive authorities, delegated with functions to regulate the activities of Information Technology Enterprises, managers and financial managers of these enterprises, legislative bodies at various levels in the preparation, review and approval of the budgets of the information technology industry.